տես յանդգնութեամբ իւր կարողութիւնը կորցրած վաճառականն էլ, ուսումնականն էլ և այլն։ Դոքա բոլորն էլ յուսաբեկ մարդիկ են, դոքա ամենքն էլ վարակուած են մի ախտով, դոցա ամենքի հոգին էլ թուլացած է։

Այս հասարակական սարսափելի և կորստաբեր ախտի դէմ կայ մի ճար, այն է՝ խելացի դաստիարակութիւն հիմնուած կրօնական—բարոյական սկզբունքի վերայ։ Նա միայն կարող է և ընդունակ վերակրթել հասարակութիւնը և անհոգի սկեպտիկներից դարձնել զօրեղ հոգու տէր մարդիկ։

(Թարգմ.) Մ. Բարովի Փահանայ Գ. Էօնջեանց

Ազիզ-Ենդրդոլ.

ԵՐԿՐԱԳՈՐԾԻ ԳԱՐՈՒՆԸ։

Գարունը եկաւ դաշտեր կանաչեց,
Ժիր երկրագործիս՝ նոր աշխոյժ տուեց,
Գնամ դուրս հանեմ ժանկոտ խոփ, գութան՝
Ընդառաջ վազեմ ես սիրուն գարնան։

—

Ամբողջ ձմեռը նստած օդայում՝
Անհամբեր նորան էի սպասում,
Թէ ե՞րբ իմ գարուն կտայ աւետիս։—
«Վեր կաց» ձայն տալով քաջ երկրագործիս։

—

Մ-ը-լ ու ջէյր-ն իմ սև գոմէշներ՝
Նոյնպէս ոսկեգոյն իմ ջուխտակ եզներ,
Դուրս հանեմ գոմից կանաչ դաշտ վազեն
Որ ցատկոտելով՝ խաղան, արածեն։

—

Առանց վար վաստակ տան մէջ նստած եմ,
Ո՛չ ուսում ունիմ, ո՛չ արհեստ գիտեմ.
Իմ արհեստ ուսում՝ իմ եզ, իմ գութան,
Որ երկրագործիս՝ սիրտ է ոյժ կտան։

—

Լծեմ իմ լծկանք դաշտերը հերկեմ՝
Դուլթանիս մաճից բռնելով երգեմ.
Զեմ նախանձիլ ես արհեստաւորին,
Կամ թէ շատերի կեղծ առևտուրին . . . .

—

Որք ամբողջ օրը սուտ երդումներով՝
Մ--ղ--ր-ի գրաւում քաղցր խօսքերով.
Եւ ո՛չ դ-ե-ի մեծ աղաներին,
Որոնք գերի են իւրեանց շահերին . . . .

—

Իսկ ես ազատ եմ այդ ամենից էլ,
Այդ իմ պապ մաճկալ՝ ինչ չէ՞ աւանդել,
— Այլ կանաչ դաշտում քրտինքներ թափել,
Եւ ամբողջ ձմեռ՝ հանգի՞ստ վայելել.

Դ--ղ--ր ՆԵՐՍԷՍ ՄԱՏ. Տ ԱԻԵՏԻՔԵԱՆՑ:

ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Կաթուղիկոսական Տեղակալ Մակար Արքեպիսկոպոսը Բարձրագոյն հրաւիրանաց համաձայն Ապրիլի 14ին ժամը 2ին յետ կէսաւուր Մայր Աթոռէս ուղեւորեցաւ ի Մոսկուա Կայսերական թագադրութեան հանդիսին ներկայ գտնուելու համար։ Նորին Սրբազնութիւնը ուղեւորելուց յառաջ Միաբանական Ուխտի հետ միասին այցելեց Գ. Ճեմարանին։ Ցարգելի Ուսուցչաց խումբը և Ճեմարանի սաները Նորին Բարձր Սրբազնութեանն ընդունեցին Հանդիսարանի մէջ քաղցր ու ներդաշնակ երգեցողութեամբ։ Նորին Բարձր Սրբազնութիւնը իւր առաժամանակեայ հրաժարականը և ինչ ինչ կարևոր խրատներ ամենին աւանդելուց յետոյ՝ Ուսուցչաց, Ուսանողաց և Միաբանական Ուխտի ուղեկցութեամբ ելաւ Ճեմարանից և նստաւ իւր կառքը, որ սպասու	եր Ճեմարանի հիւսիսային դրան առաջ Ոստիկանութեան և Վաղարշապատի երիտասարդաց բազմաթիւ ձիաւորների հետ միասին։ Միաբանութեան կողմից Նորին Բարձր Սրբազնութեանն ուղեկցեցին մինչև Երևան Գեր. Մեսրոպը և Ներսէս Եպիսկոպոսունքը և Բարեշ. Սարգիս Վարդապետ Տ. Գասպարեանցը։